

— Աստուած պահպանում է աշխատանքներին և չի թողում, որ նրանք կորչեն:

— Առաքինութեան սկիզբը համբերութիւնն է, ախտերի սկիզբը որոյզանամոլութիւնը:

Պահքն ու աղօթքը որպէս արժիւ մեղ բարձրացնում են:

— Հայր Իսիդորն ասաց. «Եթէ ցանկանում ես դու երկնքի արքայութեան արժանանալ, արճամարճի՛ր հարստութիւնը, արճաթանէքը և որկրամոլը չեն կարող մօտենալ Աստծուն»:

— Մի հայր ասաց. «Կրօնաւորն համար մեծ դանձարան է կամաւոր աղքատութիւնը, դա անհասնում հանդստութիւն է և յաւիտենական կեանքի մուտքն է»:

— Անընչապէս կրօնաւորն արծուի է նման, որ բարձրաթռիչ սլանում է, սրառես է և միայքը յստակ:

— Արժաթասէրը լցնում է իւր շտամարանները, իսկ անընչապէսը դանձ է գեղում երկընքում:

— Հայր Պիմէնն ասաց. «Ոչ թէ մարմինը պիտի սպանենք, այլ մարմնոյ ախտերը»:

— Կրօնաւորը, եթէ չը լիործուի ու չը համբերէ, չի կարող քաջ ախոյեան լինել, հոգեւորականի նշանաւորը համբերութիւնն է:

— Մի ճղնաւոր կուրացաւ. նա աղօթելիս ոչ թէ աչքի լոյս էր խնդրում Աստծուց, այլ համբերութիւն:

— Երբ կրակը վառւում է, ոչ միեղի ոչ ղեռուն, ոչ սողուն չեն մօտենում նրան. իսկ երբ սկսում է հանգչել, այն ժամանակ մօտենում են նրան բոլոր այդ տեսակ միջատները: Այսպէս է և կրօնաւորը. քանի որ նրա հաւատը ջերմ է՝ նա եռանդուն է, աղօթասէր, բարեպաշտ, բարեգործ է, չարը չի մօտենում նրան, նա վաշտւում է. բայց երբ պաղում է նա Աստուածօրութիւնից, շուտով ախտերը մօտենում են նրան և նա ապականւում է:

— Երբ մէկը ողորմութիւն է տալիս, այնպէս պիտի համարէ, որ ինքը ոչ թէ տալիս, այլ առնում է:

— Հայր Պիմէնն ասում էր. «Վե՛մ վշտի կարող ես յաղթել խոնարհութեամբ, չարով չարը չի դարձանալի, այլ բարութիւնով յաղթի՛ր չարին»:

— Հայր Անտոնն ասում էր. «Ես չեմ վախենում Աստծուց, վասն զի սիրում եմ նրան. իսկ ուր սէր կայ, այնտեղ երկիւղ չը կայ» (համ. Ե. Թով. Գ. 18):

— Հայր Թովհանէս Կարճահասակն ասում է. «Ինչպէս չի կարելի տունը շինել վերևից ներքև, այլ պէտք է հիմքից սկսել այնպէս էլ մարդկա-

յինն Աստուածալայել կատարելութեան չի հասնել առանց ընկերսիրութեան. վասն զի ընկերսիրութիւնն է քրիստոնէական պատուիրանների հիմքը:

— Որտեղ ապաշխարութիւն կայ, այնտեղ զօրութիւն չունի մեղքը:

— Թաղաւոր է նա, ով տիրում է իւր ախտերին:

— Ով արդարացնում է իւր անձը Աստծու առաջ, ինքն իրեն սպանում է:

— Կրօնաւորն անդադար պիտի զբաղուի գործով:

Նիկողայոս Աբ. Տ. Աւետիքեան.



Մ Ո Մ.

(Թարգմանութիւն Տոլստոյից).

Լուարուք զի սասցաւ. ական ընդ ական և ասումն ընդ ասուման: Այլ ես ասեմ ձեզ, մի կալ հակառակ չարին.

Մատթ. Ե. 38, 39.

Դիմի՛ղ, կատարուում էր պարօնների օրով: Ամէքը պարօն էին:

Կային այնպիսիները, որոնք յիշելով իրենց սև օրը և Աստուծուն, գութ ունէին դէպի մարդիկ՝ կային նաև շներ, անունն հեռի իրենցից, Բայց չկային աւելի վատթար իշխաններ, քան ճորտութիւնից բարձրացածները, քան այնպիսիները, որոնք ցխից ելան, իշխան եղան: Եւ հէնց ամենից աւելի նրանց պատճառով ծանր էր կեանքը:

Այսպիսի մի գործակատար բոյն էր գրել մի պարօնի կալուածքում: Դիւղացիք հարկատու էին իրենց պարօններին: Հող շատ էր, այն էլ բերրի հող, կար նաև ջուր, արօտատեղիք և անասաւ: Ամէքին առատ բաժին էր հասնում ամեն ինչից, և՛ զիւղացիներին, և՛ պարօնին. բայց պարօնն ուրիշ բաժնից եկած և իրեն տան ծառայող մէկին նշանակից գործակատար:

Իւր ձեռքն առաւ այս գործակատարը իշխանութիւնը և նստաւ խեղճ զիւղացիների

գլխին: Նա ինքը ընտանիքի տէր մարդ էր: կին ուներ և երկու ամուսնացած աղջիկներ: և արդէն փող էլ զիջել էր կարող էր ապրել ու ապրել առանց մեղքի: Բայց չէ՞ նախանձոտ էր և թաղուեց մեղքերի մէջ: Նա իրեն ցոյց տուեց առաջին անգամ երբ սկսեց գիւղացիներին, առանց խարու թիւն զնելու օրերի մէջ, միշտ աղայի գործերի վերայ աշխատեցնել: Բաց արաւ աղիւսի գործարան՝ բոլորին ալ թէ կին, յոգնեցնում էր աշխատութեամբ: Իսկ աղիւսը ինքն էր ծախում: Գիւղացիք մի քանի անգամ զնացին Մոսկուա կալուածատիրոջը զանգատուելու, բայց չյաջողուեց նոցա գործը: Ունայնաձեռն յետ դարձրեց նա գիւղացիներին և գործակատարի ազատութեան չգիպաւ: Լսեց գործակատարը որ գիւղացիք զնացել էին զանգատուելու իւր վերայ, և սկսեց վրէժ հանել նոցանից: Եղան գիւղացիներին մէջ անհաւատարիմ մարդիկ, սկսեցին գործակատարին իրենց ընկերոջ մասին լուրեր տալ և միմեանց դաւաճանել: Եւ խառնակութիւն ընկաւ ժողովրդի մէջ, գործակատարն էլ կատաղեց:

Կամայ, կամաց բանն այնտեղ հասաւ, որ գիւղացիք սկսեցին գործակատարից, ինչպէս մի դաժան դադանից, սարսափել: Եթէ նա անցնէր գիւղի միջով, ամէնքը նրանից որպէս զայլից կփախէին և որտեղ տես կպահուէին՝ նորա ուղբին չերևալու համար: Այս տեսնում էր գործակատարը և աւելի ևս կատաղում, որ իրանից վախում են: Ծեծով, աշխատեցնելով նեղում էր ժողովուրդին, և շատ տանջանքներ կրեցին նորանից գիւղացիք:

Պատահել է, որ այսպիսի չարագործներին միւս աշխարհք են ուղարկել: Սորա մասին ևս սկսեցին գիւղացիները նոյնը մտածել: Հաւաքուում էին մի անկիւն, և նոցանից աւելի համարձակը ասում էր. «Երկար պիտի տանենք մենք այս չարագործի արարքները: Ինչպէս էլ լինի մեր վերջը կորուստ է, այն ևս կայ՝ այսպիսի մէկին սպանելն էլ մեղք չէ»:

Մի անգամ, աւագ շաբթի մէջ, ժողովուեցին գիւղացիք անտառում: Աղայի անտառը մաքրելու զրկել էր գործակատարը:

Ծաշին հաւաքուեցին և սկսեցին խորհել:

— Ինչպէս, ասում են մենք այժմ ապրենք: Նա մեզ արմատից կջնջի: Հողինիւս հանեց աղքատեցնելով. օր ու զիշեր հանգիստ չունինք ոչ մենք, ոչ մեր կանայք: Եթէ մի բան էլ իւր ասածի պէս չլինի, պատրուակ կրանի ու կծեծի: Սիմէօնը նորա ծեծից մեռաւ: Անխիմին ոտները կոծղի մէջ զնելով, չարչարելով սպանեց: Ել ինչ ենք սպասում: Ահա երեկոյան կգայ այստեղ և դարձեալ կսկսի իւր անգլուխութիւնները: Հէնց իսկոյն ցած պէտք է գցել ձիուց, կացնի մի փոքրիկ հարուած էլ տալ... և ամեն բան վերջացնել: Որպէս շուն մի տեղ թաղել ու հեռն էլ ջնջել: Միայն մի պայման՝ որ անմէկքս միարան լինինք և չմասնենք միմեանց:

Այսպէս խօսողը վասիլից Մինայէն էր, գործակատարի դէմ ամէնքից աւելի նա ռի ունէր: Գործակատարը նորան ամեն շաբաթ ծեծում էր և կնոջն էլ ձեռից խլել: Իբր խոհարարուհի իրեն մօտ էր աւել:

Գիւղացիք այսպէս խօսեցին, և երեկոյան գործակատարը եկաւ: Նա եկաւ ձիով, իսկոյն պատրուակ բռնեց, թէ այնպէս չեն կտրում, ինչպէս հարկաւոր է: Կոյտի մէջ մի փոքրիկ լօրի դուռ:

— Նա, ասում է, չեմ պատուիրել, որ լօրիները կտրէք: Ո՞վ է կտրել: Ասացէք, ապա թէ ոչ բոլորիդ ծեծամահ կանեմ: Սկսեց որոնել թէ որի շարքումն էր լօրին: Եոյց տուին Սիգոռին: Արիւնդուայ արաւ գործակատարը Սիգոռի երեսը: Մտրակի մի քանի հարուածներ էլ վասիլին հասցրեց նորա դրած կոյտի փոքր լինելու պատճառով, և տուն գնաց:

Երեկոյան դարձեալ հաւաքուեցան գիւղացիք, և վասիլիքը սկսեց խօսել:

— Է՛, մարդիկ, մարդիկ: Մարդ հօ չէք, ճնճողակներ էք, «կիանգնենք, կկանգնենք», բայց երբ գործը եկաւ, ամեն ոք մի ծակ մտաւ: Ծիշտ այսպէս միարանեցան Բազէի դէմ ճնճողակները, զգաւաճաններ, զգաւաճաններ—պաշտպաններ, պաշտպաններ, բայց հէնց որ վրայ հասաւ ամէնքը եղինջների մէջ պահուելու շտապեցին: Բազէն էլ որին ինքը

Հաւանեցի բռնեց ու քաշ տուեցի ծուփուլ ծուփուլ դուրս թռան ճնձղուկները։ Համարում են, և իրենցից մէկին չեն գտնում։ Ո՞վ է պակաս — Վանկան՝ էհ էգպէս էլ պէտք էր։ Նա արժանի էր դորան։ Այսպէս և դուք։ Ասացիք միարան լինինք, կնշանակէ միարան էլ պիտի մնայիք։ Հէնց որ նա Միդոռի վերայ յարձակուեց, իսկոյն դուք էլ կխմբուէիք և տեղիւնաւոր կվերջացնէիք հաշիւը։ Ապա թէ ոչ՝ չղաւաճանենք, չղաւաճանենք — պաշտպանենք, պաշտպանենք։ Բայց հէնց որ վրայ հասաւ իսկոյն մացառների մէջ պահուեցիք։

Սկսեցին այսպէս յաճախ ու յաճախ խօսել և վերջապէս վճռեցին անպատճառ գործակատարին մահացնել։ Զարչարանաց շարաթը գործակատարը յայտնեց գիւղացիներին, որ Զատկի օրը պատրաստուին պարոնի տեղերը վարսակ ցանելու համար վարելու։ Ետ մեծ վիշտ էր այս գիւղացիների համար։ Նորա հաւաքուեցին Վասիլիյի բակում և դարձեալ սկսեցին խորհել։

Եթէ, ասում են, նա Աստուծուն մոռացել է և այգպիսի բաներ է ուզում անել, ուրեմն իրօք պէտք է սպանել նորան։ Միւսնոյն է պիտի կորչենք։

Նորա մօտ եկել էր նաև Պեօտր Միխեւը։ Խաղաղարարոյ մարդ էր Պեօտր Միխեւը և գիւղացիների խորհրդին չէր համաձայնում։ Միխեւը եկաւ, լսեց նոցա խօսքերը և ասաց։

— Զար գործ էք մտածել դուք, եղբայրներ։ Հոգի կորցնելը ծանր գործ է։ Ուրիշին կեանքից զրկելը հեշտ է, բայց մարդ եթէ ինքը լինի նորա տեղը։ Նա վատ է անում։ — Վատութիւնն էլ իր առաջն է։ Համբերութիւն պէտք է, եղբայրներ։ — Այս խօսքերի վերայ բարկացաւ Վասիլիյը։

— Սա էլ, ասում է, մի բան առել ընկել է թէ՛ մեղք է մարդ սպանելը։ Ի հարկէ մեղք է, բայց ի՞նչպիսի մարդ։ Մեղք է լաւ մարդուն սպանելը, բայց այսպիսի շանը՝ Աստուծոյ ինքն է պատուիրում որ սպանենք։ Մարդկանց վերայ խղճալով, կատաղած շանը սպանել պէտք է։ Նորան չսպանելով աւելի մեղք գործած կլինինք։ Ի՞նչ է, թողնենք որ

նա մարդկանց ոտքի տակ տայ։ Իսկ մենք եթէ տուժենք էլ, գոնէ մարդկանց համար տուժած կլինինք։ Մարդիկ մեզնից շնորհակալ կլինին։ Եթէ բերանդ բաց անես ու նայես, նա բոլորին կվնասէ։ Դու, Միխեւ, դադարի բաներ ես ասում։ Փոքր մեղք կլինի մի՛թէ, եթէ մենք տէրունական տօնին գործ անելու երթանք։ Դու ինքդ էլ չես գնայ։

Իսկ Միխեւն ասաց։

— Ի՞նչու չպիտի երթանք, — ասում է։ Հերկելու կուղարկեն, հերկելու էլ կերթամ։ Աստուած կիմանայ, թէ ում է յանցանքը, միայն մենք Աստուծուն չմոռանանք։ Սա ասում է, եղբայրներ, ինձնից չեմ ասում։ Եթէ պէտք լինէր չարը չարով հեռացնել, այն ժամանակ Աստուծուց էլ մենք այդ մասին օրէնք կունենայինք։ Բայց մեզ ուրիշ բան է պէտք։ Դու կսկսես չարը ոչնչացնելու աշխատել, իսկ նա քո մէջ կմտնի։ Մարդ սպանելը մեծ բան չէ, բայց արիւնը սրտիդ վերայ կձանրանայ։ Մարդ սպանել, կնշանակէ իւր սիրտը արիւնոտել։ Դու կմտածես, թէ վատ մարդուն սպանեցիր, թէ չարը մէջ տեղից վերացրիր։ Բայց ահա մէկ էլ տեսար դու ինքդ քո մէջ այն չարիքից էլ վատ չարիք մտցրիր։ Խնարհի՛ր դժբաղդութեան առաջ, և դժբաղդութիւնն էլ քո առաջ կխոնարհի։

Սա այսպէս գիւղացիք չխաղաղացան համաձայնութիւն կայացնել, տարբեր համոզմունքներով բաժանուեցին։ Ոմանք Վասիլիյի խօսքերին հետեւելով նորա պէս էին մտածում, միւսները համաձայնում էին Պեօտրի ասածին, թէ պէտք է համբերել և մեղք չգործել։

Զատկի առաջին օրը՝ կիրակին, տօն պահեցին գիւղացիք։ Երեկոյեան գէմ եկաւ վերակացուն պարոնի տանից գաւառային վարչութեան հետ և ասում է. «Գործակատար Միխեւիլ Սիմէօնովիւր պատուիրում է բոլոր գիւղացիներին պատրաստուել վաղը վարսակի տեղ վարելու»։ Տանուտէրը պատուեց գաւառական վարչութեան հետ ամբողջ գիւղը, իմաց տուեց բոլորին, որ վաղը վարելու դուրս գան և որին գետի միւս կողմը նշանակեց, որին մեծ ձանապարհից սկսուած տեղերը։ Լաց եղան գիւղացիք, բայց պատուէրը չկա-

տարել չհամարձակուեցան: Առաւօտեան արօրներն առին: դուրս եկան վարելու: Ծկեկեղեցում հնչում են պատարագի զանգերը: Ժողովուրդը տօն է կատարում: Իսկ գիւղացիք վարում են:

Գործակատար Միխայիլ Սիմէօնովիչը քնից ուշ վեր կացաւ. գնաց կալուածքը պտտելու: Տնեցիք՝ կինը և որբեայրի աղջիկը (որ տօնի առթիւ եկել էր) հագնուեցին: ամէն բան կարգի գրին. ծառան նոցա համար կառքը լծեց, զնացին պատարագին եկեղեցի և վերադարձան: Աղախինը թէյ պատրաստեց, եկաւ և Միխայիլ Սիմէօնովիչը. նստան թէյ խմելու: Թէյը խմեց Միխայիլ Սիմէօնովիչը, ծխափողը վառեց և կանչեց վերակացուն:

— Հը՛, ի՛նչ արիւր, զրկեցի՛ր գիւղացիներին վարելու:

— Զրկեցի՛ս Միխայիլ Սիմէօնովիչ:

— Բոլորը գնացին:

— Բոլորը գնացին. ես ինքս նոցա համար տեղեր նշանակեցի:

— Տեղերը նշանակիլը նշանակեցիր. բայց վարում են արդեօք: Գնա նայիր և ասա՛ որ ես ճաշից յետոյ գալու եմ. երկու արօրով մէկ օրավար թող վարեն վերջացնեն և թող լաւ վարեն: Եթէ պակաս բան գտնեմ ես տօն, բան չեմ նայի:

— Շատ բարի:

Եւ վերակացուն պիտի երթար. Միխայիլ Սիմէօնովիչը կանգնեցրեց նրան: Միխայիլ Սիմէօնովիչը յետ դարձրեց նրան, ինքն էլ սկսեց արօրուել. ուզում էր մի բան ասել, բայց չէր իմանում: Ինչպէս ասէր: Տրօրուեց, արօրուեց և ասաց.

— Մի բան ես. դու լսիր նոյնպէս, թէ այդ աւազակները իմ մասին ի՛նչ են խօսում: Ո՞վ է հայհոյում և ի՛նչ է ասում, բոլորը ինձ կպատմես: Ես գիտեմ, այդ աւազակներին հաճելի չէ աշխատելը: Կողքի վերայ պառկել, դատարկագորտութիւն անել են սիրում միայն: Ուտել և տօն պահել, ահա թէ ինչ են սիրում նոքա. իսկ այն չեն մտածում, թէ վարի ժամանակը եթէ անցնի, վարելն այնուհետեւ էլ ուշ կլինի: Ուրեմն այդպէս. դու լաւ լսիր նոցա խօսքերը և իմացիր թէ ո՞վ ինչ կասէ, որ ինձ հաղոր-

դես: Ինձ հարկաւոր է այդ իմանալ: Գնա՛ և նայիր, ամեն ինչ պիտի պատմես առանց մի բան ծածկելու:

Շուռ եկաւ վերակացուն, դուրս եկաւ, նստաւ ձին և գնաց դաշտ գիւղացիների մօտ: Գործակատարի կինը լսեց մարդու խօսակցութիւնը վերակացուի հետ, եկաւ մարդու մօտ և սկսեց խնդրել նորան: Գործակատարի ամուսինը խաղաղաբայոյ կին էր և բարի սիրտ ունէր: Միշտ երբ կարողանում էր զսպել, զսպում էր մարդուն և գիւղացիներին նրա առաջ պաշտպանում: Ծկաւ նա իր մարդու մօտ և սկսեց խնդրել.

— Իմ սիրելի Միշենկա, ի սէր Զրիստոսի, այս մեծ տօնին՝ Տիրոջ օրը, մեղք մի գործիր դու և արձակիր գիւղացիներին:

Միխայիլ Սիմէօնովիչը չընդունեց կնոջ խօսքերը և միայն ծիծաղեց նորա վերայ:

— Թէ՛, ասում է, վաղուց մտրակի համ չես առել և այդ պատճառով համարձակութիւն ես ստացել ու քեզ չվերաբերած գործի մէջ ես խառնուում:

— Միշենկա, հոգիս, ես վատ երազ եմ տեսել քո մասին, լսիր ինձ, արձակիր գիւղացիներին:

— Էդ է՛, է՛, ես էլ հէնց է՛ն եմ ասում: Թէ երեւի շատ ես գիրացել, կարծում ես թէ մտրակի հարուածներն էլ չեն ազդի վերադ. Զգո՛յ՛ կաց:

Բարկացաւ Սիմէօնովիչը, վառ ծխաբարձով խփեց կնոջ բերնին, դուրս արաւ իր մօտից և հրամայեց ծառը բերել:

Միխայիլ Սիմէօնովիչը կերաւ դոնգոզ, կարկանդակ, խողի մնով ապուր, խողի ձագ՝ տապակած, կաթնապուր, բալից պատրաստած ըմպելիք խմեց. քաղցր կարկանդակով էլ քաղցրացրեց բերանը և կանչեց իր մօտ խոհարարուհուն, նստեցրեց նրան երգեր երգելու: Ինքն էլ առաւ կիթառն ու սկսեց հետը նուագել:

Նստել է Միխայիլ Սիմէօնովիչը ուրախ սրտով, զկռտում է. լարերի հետ խաղում և խոհարարուհու երեսին ծիծաղում: Ծերս մտաւ վերակացուն, դուրս տուեց և սկսեց հաղորդել ինչ որ դաշտում տեսել էր:

— Զը՛, ի՛նչպէս է, վարում են իրենց
դասը պիտի վերջացնեն:

— Արդէն կէսից աւելին վարել են:

— Պակաս բան չկայ:

— Չտեսայ, լաւ են վարում վախում եւ:

— Հոգը լաւ քանդում է:

— Շատ հեշտ է քանդում հոգը,
խաշխաշի նման ցրում է:

Մի փոքր ժամանակ լռեց գործակա-
տարը:

— Զը՛, իմ մասին հապա ի՛նչ են ասում:
հայհոյում են: Տանուտէրը ծամծմել սկսեց,
բայց Միխայիլ Սիմէօնովիչը հրամայեց բոլորը
ձշտութեամբ ասել:

— Ամեն բան ասա՛, դու քո խօսքերը
չպիտի ասես այլ նոցանը: Եթէ ձիշտն ասես,
ես քեզ կվարձատրեմ, իսկ եթէ ծածկես,
յետոյ չմեղադրես կծեծեմ: Ե՛յ, կատիւշա՛,
մի բաժակ արա՛ղ տուր սրան, որ համարձակ
լինի:

Գնաց խոհարարուհին բերեց արաղը,
տանուտէրին համեղէք արաւ: Տանուտէրը
նոցա ասելը շնորհաւորեց, խմեց արաղը, սրբեց
բերանը և սկսեց խօսել. «Միկենոյն է՛ մը-
տածում էր նա, ես մեղաւոր չեմ, որ նորան
չեն գովում. եթէ նա հրամայում է, ես էլ
կասեմ՝ ձշմարխոր: Համարձակութիւն առաւ
տանուտէրը և սկսեց պատմել:

— Տրանջում են, Միխայիլ Սիմէօնովիչ,
տրանջում են:

— Բայց ի՛նչ են ասում, ասա՛:

— Միշտ միկենոյն բանն են ասում: Թէ
նա Ասածուն չի հաւատում:

Ժիծաղեց գործակատարը:

— Այդ ո՛վ ասաց, հարցրեց:

— Բոլորն էլ ասում են: Ասում են թէ
նա սատանային է անձնատուր եղել:

Ժիծաղում է գործակատարը:

— Այդ բոլորը լաւ ասում է, բայց դու
պատմիր թէ ջոկ, ջոկ ո՛վ ինչ է ասում:
Վասկան ի՛նչ է ասում:

Չէր ուզում վերակացուն իւրայինների
մասին բան ասել, բայց նա և վասիլիքը վա-
ղուցուայ թշնամիներ էին:

— Վասիլիքը՛, ասում է, բոլորից աւելի
էր հայհոյում:

— Ի՛նչ է ասում, դու է՛ն ասա՛:

— Ասելու էլ մարդ վախում է: Նա չը-
պիտի աղատուի, ասում է, և մեղքերը
չքաւած պիտի մեռնի:

— Այ ապրի նա՛, հապա էլ ի՛նչ է սպա-
սում, չի սպանում: Երեւի ձեռները կարծ են,
Հաւ, Վասկա՛, մենք քեզ հետ հաշիւներս կը-
մաքրենք: Տիշկան կարծեմ նոյնպէս շունն է:

— Բոլորն էլ վատ են խօսում:

— Բայց ի՛նչ են ասում:

— Կրկնելն էլ զգուշիլ է:

— Է՛հ, ի՛նչ զգուշոււ բան կայ: Դու
ասելուց մի՛ քաշուիր:

— Ասում են, թող պատուի նորա փորը
և դուրս թափուի թափանք:

Ուրախացաւ Միխայիլ Սիմէօնովիչը,
հռհռաց մինչև անգամ:

— Տեսնե՛ք, որի թափանք աւելի շուտ
դուրս կթափուի: Էդ ասողն ո՛վ էր, Տիշկան:

— Ոչ ոք էլ լաւ չխօսեց, բոլորն էլ
հայհոյում են, բոլորն էլ սպառնում:

— Հաւ, հապա Պետրուշկա Միխե՛նը,
Նա ի՛նչ է ասում: Նոյնպէս երեւի անպէտքը
հայհոյում է:

— Ո՛չ, Միխայիլ Սիմէօնովիչ, Պետրը չի
հայհոյում:

— Ի՛նչ է անում հապա:

— Նա էր միայն բոլոր գիւղացիների մէջ,
որ ոչինչ չէր ասում: Եւ խմաստուն էլ մարդ
է նա: Զարմացայ ես նորա վերայ, Միխայիլ
Սիմէօնովիչ:

— Ի՛նչ է որ:

— Ինչ բան է արել նա: Բոլոր գիւղա-
ցիք էլ հիացած են նորանով:

— Հաւ, ի՛նչ է արել:

— Ո՛հ, շատ հրաշալի է է՛: Սկսեցի ես
մօտենալ նորան: Նա վարում է Տուրկինի
բարձրութեան թէք ընկած օրավարը: Սկսեցի
ես մօտենալ նորան, լսում եմ, մէկը երգում
է, այնպէս մեղմ դուրս է բերում, գեղե-
ցիկ... իսկ արօրի վերայ էլ դաշտերի միջով
մի ինչ որ լոյս է երևում:

— Յետոյ:

— Մի ինչ որ լոյս է երևում, կարծես
կրակ լինի: Աւելի մօտ գնացի, տեսնեմ մի
5 կոպէկանոց մօմ կպցրած է արօրի մաճին:

և վառուում է, քամին էլ չի խանգարում: Ինքն էլ նոր շապիկ է հագել, վար է անում և հոգեոր երգեր է երգում: Յեսա էլ է դարձում արօրը, մաքրում էլ է, բայց մամը չի հանդուժում: Իմ առաջ նա արօրը մաքրեց, մաքրիչը դրեց անդր, արօրը նորից գցեց վարելու: և մամը դարձեալ վառուում էր, չէր հանդուժում:

Իսկ ի՞նչ ասաց.

— Ոչինչ չասաց: Միայն, որ ինձ տեսա՝ «Բրիստոս յարեաւ ի մեռելոց» ասաց, համբուրուեց և շարունակեց երգել:

Դու ի՞նչ խօսեցիր նրա հետ:

— Ես չխօսեցի, բայց եկան գիւղացիք և սկսեցին նրա վերայ ծիծաղել: Այս ատուժ են: Միխէիչը իւր ամբողջ կեանքում մեղքերը չի կարող ապաշխարել, որովհետեւ Զատիկ օրերը վար է անում:

— Նա ի՞նչ պատասխանեց.

— Նա միայն ասաց. «և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն» և դարձեալ արօրն առաւ ձեռք, քչեց ձին ու մեղմ ձայնով երգեց: Մոմն էլ վառուում էր և չէր հանդուժում:

Գործակատարը դադարեց ծիծաղելուց, ցած դրեց կիթառը, խոնարհեց գլուխը և խորասուզուեց մաքրի մէջ:

Նստեց, նստեց, խոհարարուհուն և վերակացուն վաճակեց և անցաւ վարադոյրի ետեւը մահճի վրայ պառկեց և սկսեց յոգոց հանել, սկսեց անքաղ՝ կարծես խրճերով բարձած սայլ լինէր գնալիս: Եկաւ նորա մօտ կինը, սկսեց խօսեցնել: Պատասխան չտուեց: Այսքանը միայն ասաց.

— Նա ինձ յաղթեց, Հիմա ես էլ հասկացայ:

Սկսեց կինը համոզել նորան.

— Գնա գու արձակիր նրանց, թերեւս ոչինչ չի լինի: Ինչպիսի բաներ էիր անում չէիր վախենում, իսկ այժմ ի՞նչ ես այդպէս թուլացել:

— Կորած եմ ես, ասում է, յաղթեց նա ինձ:

Կինը գոռաց նորա վերայ.

— Ի՞նչ առել ընկել է. «յաղթեց, յաղթեց», գնա արձակիր գիւղացիներին և ամեն բան էլ լաւ կլինի: Գնա, ես հիմա կպատուիրեմ, որ ձին թամբեն:

Բերին ձին, և կինը համոզեց ամուսնուն որ դաշտ գնաց և գիւղացիներին արձակի:

Նստաւ Միխայիլ Սիմէօնովիչը ձին և գնաց դաշտ:

Դուրս եկաւ ճանապարհը, աղախինը բաց արաւ նորա առաջ բակի դռները: Նա մտաւ գիւղի Գիւղացիք հէնց որ տեսան գործակատարին բոլորը թաք կացան, որք բակը մտաւ, որք մի անկիւնն, որն էլ բանջարանոցների մէջ պահուեց:

Գործակատարը անցաւ ամբողջ գիւղը, մօտեցաւ երկրորդ դուրս տանող դռներին: Դռները փակ էին, ինքն էլ ձու վերայից բաց անել չէր կարողանում: Շատ կանչեց գործակատարը, որ գան բաց անեն, բայց ոչ ոք չեկաւ: Ընթաւ իջաւ ձիուց, բաց արաւ դռները և դռների մօտ ուղեց նորից ձին նստել: Դրեց ոտը ասպնդակի մէջ, բարձրացաւ ուղեց միւս ոտն էլ թամբի միւս կողմը անցկացնել, բայց ձին խոզից խրանեց, թաւա դէպի ցանկապատը, նա էլ ծանր մարդ էր, չկարողացաւ թամբի վերայ մնալ՝ փորով ընկաւ ցանկապատի վերայ: Ընկապատի մէջ մի ցից կար: Ճայրը սուր և միւս ցցերից էլ բարձր, նա հէնց այդ ցցի վերայ ընկաւ, պատառեց փորը և զեպին փռուեց:

Գիւղացիք վերադարձան վար անելուց: Նոցա ձիերը փոխում էին և դռներով չէին անցնում: Մայեցին գիւղացիք տեսան Միխայիլ Սիմէօնովիչին երեսի վրայ ընկած, ձեռները տարածած, աչքերը սառած և ամբողջ փորոտիքը դուրս թափած. արիւնն էլ զեպինը չէր ծծել, լծացել մնացել էր:

Վախեցին գիւղացիք և ձիերը ուրիշ ճանապարհով անցկացրին: Միայն Պեօտր Միխիւսը իջաւ, մօտեցաւ գործակատարին, փակեց նորա աչքերը, սայլը լծեց, որդու օգնութեամբ ձգեց հանգուցեալին սայլի մէջ և տարաւ պարոնի բակը:

Ամէն բան իմացաւ պարոնը և գիւղացիներին ճորտութիւնից ազատեց, դարձրեց հարկատու:

Եւ հասկացան գիւղացիք, որ Աստուծոյ զօրութիւնը մեղքի մէջ չէ, այլ բարութեան մէջ է:

Բ. Մ.